Դասի պլանավորում

Թեմա ՝ << Սեղանի սպասքադրում : Անձեռոցիկների ծալադրում օրիգամի եղանակով>>

Նպատակը ՝

Նախաճաշի, ճաշի և ընթրիքի սեղանի սպասքադրում , անձեռոցիկների ծալքադրման տեխնոլոգիայի ուսուցում օրիգամի եղանակով:

Խնդիրները ՝

.Ծանոթացնել սպասքադրման կանոններին:

.Սովորել սպասքադրել նախաճաշի, ճաշի և ընթրիքի համար նախատեսված սեղանները:

.Սովորեցնել համադրել սպասքին համապատասխան սփռոցը և անձեռոցիկը :

.Ծանոթացնել անձեռոցիկի տեսակներին:

.Սովորեցնել ըստ տրված նմուշօրինակի քայլաշարի ծալել անձեռոցիկը :

.Զարգացնել համագործակցության կարողությունները:

Տևողությունը ՝ ***45 րոպե***
Դասարանը ՝ ***V***
Դասի տեսակը ՝ ***- գործնական***
Անհրաժեշտ նյութեր ՝ ***սպասք,սփռոց, անձեռոցիկներ***

Խթանում ՝ ***5 - 7 րոպե***

<<Մտագրոհ>>մեթոդի կիրառմամբ պարզել սովորողների գիտելիքների առկա մակարդակը <<սպասքադրում>> հասկացության մասին:

Խմբին ուղղել հետևյալ հարցադրումները ՝

.Ի՞նչ է սպասքադրումը:
.Ի՞նչ քայլաշարով է այն կատարվում:
.Ի՞նչ սպիտակեղեն են օգտագործում խոհանոցում:

. Անձեռոցիկի ի՞նչ տեսակներ գիտեք։

Իմաստի ընկալում՝ 2,5 րոպե

Սովորողներին բաժանել 3 խմբի ։ Յուրաքանչյուր խումբ ստանում է ծալադրման նմուշօրինակը՝ պատրաստման քայլաշարով։Խմբից որևէ մեկը ներկայացնում է պատրաստման եղանակը։
Վերջացնելուց հետո սկսում են միասին սպասքադրել սեղանը՝ ընտրելով այն սպասքը և պարագաները,որոնք այս պարագայում գտնում են անհրաժեշտ։

Կշռադատում՝ 8 րոպե

Խմբերի համատեղ աշխատանքների արդյունքները ամփոփվում են և գնահատվում։

Ռեֆլեքսիա

1.Ի՞նչ նոր բան սովորեցին։

2.Ո՞րտեղ կարող ենք այն կիրառել։

3.Ի՞նչ զգացողություններ ունեցաք։